[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
14	Հունվար	2019 թ.		Բ	2440845551
[4] Մատուցման ամսաթիվը					
14	Հունվար	2019 թ.			

Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
Սերիա	Համար
Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	2	3	2	3	0	2	8	1		
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[10] Անվանումը	ՔՆԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ Անհատ ձեռնարկատեր (ԱՁ)									
[11] Բանկային տվյալները	ՀԷԲ	N 163005463282								
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍՆՈՐՔ 5 Փ. 7/1									
[13] Լրացուցիչ տվյալներ	Նորք-Մարաշ 5փ. 7/1 տուն									

Ծառայություն (աշխատանքներ) ստացող անձի										
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3		
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ									
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխ.գործառնական վարչություն	N 900011000834								
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5									
[19] Լրացուցիչ տվյալներ	Երևան Մամիկոնյանց 46/5									
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն									
	Լիազորագիր	Համար								
		Ամսաթիվ								

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

NN Հ/Հ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բնութագրությունը)	Չափի միավորը	Հարկանենթակա ծառայությունների ծավալը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	քր.գործ90151016Լազերային տեխնիկա ՓԲԸ() կազմվել են այցուսակներ, տրվել է կարծիք	1	1	150000		150000
Ընդամենը						150000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ SARGSYAN KNARIK 7908530079

Հար

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

14/01/2019 14:29:15

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Մասնագիտական ստուգում նշանակելու մասին

<<10>> դեկտեմբերի 2018թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Դ.Իգիթյանս, վերանայելով վարույթիս թիվ 90151016 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<<Լազերային տեխնիկա>> ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Վահան Համազասպի Վարդանյանը ՀՀ զինվորական դատախազ, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանին 29.02.2016թ. հաղորդում է ներկայացրել այն մասին, որ իր ղեկավարությամբ գործող ընկերության պինդ մարմինների բաժնի պետ Հովհաննես Աղվանի Մակարյանը 2013թ. ապրիլի 30-ին կնքված աշխատանքային պայմանագրով ստանձնելով նույն ընկերության և ՀՀ ՊՆ միջև ԲԸԱՀԱՇՁԲ-13-8 և ԲԸԱՀԱՇՁԲ-13-9 պայմանագրերով նախատեսված աշխատանքները սահմանված ժամկետներում և որակով հանձնելու պարտականությունները, չարաշահելով նախկին տարիներում նույն ընկերությունում աշխատելու ընթացքում ձեռք բերված վստահությունը, հափշտակել է պայմանագրում սահմանված աշխատանքների կատարման նպատակով <<Լազերային տեխնիկա>> ՓԲ ընկերության կողմից իրեն փոխանցված առանձնապես խոշոր չափերի՝ 9.000.000 ՀՀ դրամ գումարը:

Դեպքի առթիվ, 2015թ. մարտի 21-ին որոշում է կայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 178 րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով թիվ 90151016 քրեական գործը հարուցելու և վարույթ ընդունելու մասին:

Քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է, որ 2013թ. մարտի 05-ին կնքվել են համապատասխանաբար ԲԸԱՀԱՇՁԲ-13-8 /96.250.000 ՀՀ դրամի չափով/ և ԲԸԱՀԱՇՁԲ-13-9 /37.000.000 ՀՀ դրամի չափով/ պայմանագրերը՝ առաջինի դեպքում աչքի համար անվտանգ հաճախային լազերային հեռաչափիչի ճառագայթիչ, իսկ երկրորդ դեպքում աչքի համար անվտանգ մոնոիմպուլսային լազերային հեռաչափիչի ճառագայթիչ սարքեր պատրաստելու համար: Հաշվի առնելով կատարվելիք աշխատանքների ծավալին և որակի մասնագետների ներգրավվածության անհամապատասխանությունը, 2013թ. ապրիլի 30-ին <<Լազերային տեխնիկա>> ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Վահան Համազասպի Վարդանյանի ընկերության նախկին աշխատակից Հովհաննես Մակարյանի միջև կնքվել է աշխատանքային պայմանագիր, համաձայն որի, վերջինս նշանակվել է ''Պինդ մարմինների լազերների'' բաժնի պետ, որով իսկ ստանձնել է հիշյալ պայմանագրերով նախատեսված աշխատանքների՝ ճիշտ ժամանակին և տեխնիկական բնութագրերին համապատասխան սարքավորումներ պատրաստելու պատասխանատվությունը: Աշխատանքները սկսելուց անմիջապես հետո Հովհաննես Մակարյանը առաջարկել է ''Խաչ-Գրի-Իմպեքս'' ՍՊԸ-ի /ինչպես հետագայում պարզվել է, Հովհաննես Մակարյանը հանդիսացել է նույն ՍՊԸ համահիմնադիրներից մեկ/ հետ կնքել պայմանագրեր՝ էլեկտրոնային սնուցման աղբյուրներ ձեռք բերելու նպատակով, որ կապակցությամբ <<Լազերային տեխնիկա>> ՓԲԸ-ի /ի դեմս տնօրեն Վահան Վարդանյանի/ ''Խաչ-Գրի-Իմպեքս'' ՍՊԸ-ի /ի դեմս տնօրեն Աշոտ Խաչատրյանի/ միջև 2013թ. մայիսի 07-ին ԲԸԱՀԱՇՁԲ-13-8 պայմանագրի կատարման մասով կնքվել է **PS/LD-1** պայմանագիրը, իսկ ԲԸԱՀԱՇՁԲ-13-9 պայմանագրի կատարման մասով կնքվել է **PS/LD-2** պայմանագիրը:

Կատարվելիք աշխատանքների թեմաներով ''Խաչ-Գրի-Իմպեքս'' ՍՊԸ-ի և Հովհաննես Մակարյանի պահանջով, ''Լազերային տեխնիկա'' ՓԲԸ-ն 2013-2014թթ. ընթացքում ընդհանուր առմամբ փոխանցել է 9.000.000 ՀՀ դրամ գումար՝ PS/LD-1 և PS/LD-2 պայմանագրերի գումարներից ավել 4.000.000 ՀՀ դրամ գումարով, որոնցով պատվիրվել է գնել թիվ 27, 29, 30 31 և 32 հաշիվ ֆակտուրաներում նշված ապրանքները: Հովհաննես Մակարյանը լինելով ''Խաչ Գրի-Իմպեքս'' ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրերով մատակարարվելիք ապրանքների և աշխատանքների կատարման պատասխանատու, անձամբ ինքն է ''Խաչ-Գրի_Իմպեքս'' ՍՊԸ-ից ընդունել կատարված աշխատանքները, դրանով իսկ ''Լազերային տեխնիկա'' ՓԲԸ-ին հնարավորություն չտալով ժամանակին բացահայտելու մատակարարվող ապրանքների ցածր տեխնիկական մակարդակը և դրանց անհամապատասխանությունը տեխնիկական պահանջներին, ինչը պարզվել է հետագայում, իսկ արդյունքները և մատակարարված ապրանքների տեխնոլոգիաների ու որակի անհամապատասխանության փաստն արձանագրվել է ''Լազերային տեխնիկա'' ՓԲԸ գլխավոր տնօրեն Վահան Վարդանյանի թիվ 02/Մ հրամանով ստեղծված ''Խաչ-Գրի-Իմպեքս'' ՍՊԸ-ի և Հովհաննես Մակարյանի կողմից կատարված աշխատանքների ստուգման վերաբերյալ հանձնաժողովի կազմած ակտում:

<<Լազերային տեխնիկա>> ՓԲԸ լաբորատորիայի վարիչ-գլխավոր կոնստրուկտոր պաշտոնակատար Վարդան Փահլավունին 14.03.2016թ. ներկայացրել է 3 հատ մետաղական սև գույնի արկղեր՝ համալրող դետալներով, ինչպես նաև 2 հատ տպասալիկներ և հայտարարել, որ դրանք Հովհաննես Մակարյանն է պատրաստել ու ներկայացրել որպես PS/LD-1 և PS/LD-2 պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման արդյունք, որոնք իրենցից ներկայացրել են անսարք մասեր և ոչ նպատակային նշանակության օգտագործման առարկաներ, որոնք վերցվել են, փաթեթավորվել՝ համապատասխանաբար 5 փաթեթներում ու կնիքվել՝ դատաապրանքագիտական փորձաքննության ենթարկելու համար:

<<Լազերային տեխնիկա>> ՓԲԸ ճանաչվել է տուժող, իսկ ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Հրաչ Ալեզյանը՝ տուժողի ներկայացուցիչ:

Քրեական գործի մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը ցուցում է տվել առգրավել ''Լազերային տեխնիկայի հարկային և մաքսային գործերն ու նշանակել մասնագիտական ստուգում:

Քննության ընթացքում հիշյալ գործերը, ինչպես նաև ''Հարկատու-3'' տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությունները առգրավվել են:

Վերոգրյալի հետ կապված անհրաժեշտություն է առաջացել պարզել ''Լազերային Տեխնիկա'' ՓԲԸ-ի հաշվապահական հաշվառումը վարելու ընթացակարգը, հարկային պարտավորությունների կատարման փաստը, ՀՀ պաշտպանության նախարարության հետ կնքված վերը նշված պայմանագրերով մատակարարված ապրանքատեսակների արժեքները, որոնց համար պահանջվում է մասնագիտական կարծիք, իսկ Ա/Ձ Քնարիկ Սարգսյանը ճանաչվել է մասնագետ:

Հաշվի առնելով, որ քրեական գործի բազմակողմանիությունը, լրիվությունը և օբյեկտիվությունը ապահովելու նպատակով անհրաժեշտ է պարզել գործի համար նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ՝ մասնավորապես, <<Լազերային Տեխնիկա>> ՓԲ ընկերության կողմից հաշվապահական հաշվառումը վարելու, հարկային և մաքսային պարտավորությունները կատարելու, ՀՀ պաշտպանության նախարարության հետ կնքված վերը նշված պայմանագրերով ձեռքբերված ապրանքատեսակների արժեքները, ինչպես նաև պարզել մի շարք այլ հանգամանքներ, որոնց համար անհրաժեշտ են հաշվապահական բնագավառի մասնագիտական գիտելիքների տիրապետող, գործով չշահագրգռված անձի աջակցություն, ուստի ելնելով վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով և 84 հոդվածով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 90151016 քրեական գործով նշանակել մասնագիտական ստուգում, որի կատարումը հանձնարարել որպես մասնագետ նշանակված Ա/Ձ Քնարիկ Ռուբենի Սարգսյանին (ծնված 29.08.1953թ., հաշվառված և բնակվում է ք.Երևան, Նորք, 5-րդ փողոց տուն 7/1, ՀՎՀՀ 23230281):

2. Մասնագետի լուծմանն առաջադրել հետևյալ հարցերը.

- <<Լազերային Տեխնիկա>> ՓԲ ընկերության հաշվետվությունները կազմվել են հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքի պահանջների համաձայն, թե՝ ոչ:
- Վերը նշված պայմանագրերի մասով ընկերությունը ՀՀ պետբյուջեյի հանդեպ իր հարկային պարտավորությունները պատշաճ կատարել է, թե՝ ոչ:
- Վերը նշված պայմանագրերի մասով ընկերությունը մաքսային ձևակերպումները ճիշտ կատարել է թե՝ ոչ, ՀՀ պետբյուջեյի հանդեպ իր մաքսային պարտավորությունները պատշաճ կատարել է, թե՝ ոչ:
- Նշված պայմանագրերի շրջանակներում <<Լազերային Տեխնիկա>> ՓԲ ընկերության կողմից ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարված ապրանքատեսակները պատրաստելու համար համապատասխան մասերն ու սարքերը երբ են ձեռքբերվել, ինչ արժեքով, ինչքան և որտեղից, դրանք բավարար են եղել արդյոք պայմանագրային պարտավորությունները կատարելու համար:

Եթե ստուգման ընթացքում կառաջանան գործի համար նշանակություն ունեցող այնպիսի հարցեր, որոնք սույն որոշմամբ չեն առաջադրվել, խնդրում եմ այդ հարցերին ևս պատասխանել:

3. Մասնագետին տրամադրել <<Լազերային Տեխնիկա>> ՓԲ ընկերության հարկային գործը՝ բաղկացած 2 հատորից՝ ''365'' և ''328'' թերթերից, ''Հարկատու 3'' համակարգի տեղեկատվական թղթապանակը՝ բաղկացած ''431'' թերթից, մաքսային գործը՝ բաղկացած 3 հատորներից՝ ''320'' ''340'' և ''76'' թերթերից, ինչպես նաև քրեական գործի 13-րդ հատորը՝ բաղկացած ''241'' թերթից, 14-րդ հատորը՝ բաղկացած ''239'' թերթից, 15-րդ հատորը՝ բաղկացած ''264'' թերթից և 16-րդ հատորը՝ բաղկացած ''249'' թերթից, անհրաժեշտության դեպքում մասնագետին կարող են տրամադրվել քրեական գործի նյութերը և պահանջվող այլ փաստաթղթեր:

ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական **Դ.Իգիթյան**